ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/35, 28.03.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Մեդէքսպերտ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/20»

Գնման առարկան՝ բժշկական թանզիվի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/20» ծածկագրերով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն

օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Հասցե՝ ք. Երևան Մելիք Ադամյան 1

«Մեդէքսպերտ» ՍՊԸ տնօրեն Ն. Հակոբյանից

Հասցե՝ Նոր Խարբերդ, 1փ□, 1 նրբ□, տ□31, հեռ. 077002100

e-mail: medexpert077@gmail.com

Պատվիրատու «ՀՀ պաշտպանության նախարարություն»

Հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

Գնանշման հարցման ընթացակարգի

ծածկագիր <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/20>>

Գնման առարկա՝ <<բժշկական թանզիվ>>

Բ Ո Ղ Ո Ք

1. Վեճի առարկան

«ՀՀ պաշտպանության նախարարություն»-ը բժշկական թանզիվի գնման նպատակով հրապարակել է <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/20>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

<<Ծանոթություն>> բաժնում Պատվիրատուի կողմից մասնավորապես դրվել են հետևյալ պահանջները

<<1.2 Պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների դեպքում՝ դրանք հանձնման պահին պետք է ունենան ընդհանուր պիտանելիության ժամկետի առնվազն 1/2-ը:

2. Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.

2.1 Խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:

2.3 Մատակարարված ապրանքի մակնշման մեջ կամ ուղեկցող փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա «1.2» կետի համապատասխանությունը որոշելու անհնարինության դեպքում՝ մատակարարված ապրանքների «1.2» կետին համապատասխանությունը հավաստող փաստաթուղթ՝ տրված արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից:>>:

ա. Վերոնշյալ պահանջներից 2□1 կետում նշված պահանջը խոչընդոտում է մրցակցությանը, քանի որ ընթացակարգին կարող է մասնակցել միայն արտադրող ընկերության պաշտոնական

ներկայացուցիչը. իսկ վերավաճառող ընկերություններից ձեռք բերված ապրանք մատակարարող ընկերությունները զրկվում են այդ իրավունքից, քանի որ պատվիրատուի պահանջած խմբաքանակի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի են միայն արտադրողի պաշտոնական ներկայացուցչին.

բ. Վերոնշյալ պահանջներից 2.3 կետում նշված պահանջը խտրական է, քանի որ արտադրողի ներկայացուցիչը առավելություն է ստանում վերավաճառող ընկերությունից ապրանք ձեռք բերած ընկերության նկատմամբ, մասնավորապես պատվիրատուն պահանջում է, որ ապրանքի պիտանիության ժամկետի վերաբերյալ փաստաթուղթը տրված լինի հենց արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից, այսինքն վերավաճառող ընկերությունից ձեռք բերված ապրանքը համակցված բաց, հասանելի աղբյուրներից ձեռք բերված տվյալ մոդելի ապրանքի պիտանիության ժամկետի վերաբերյալ փաստաթղթով, անընդունելի են պատվիրատուի համար:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը

ա. 2.1 կետում նշված պահանջը խոչընդոտում է մրցակցությանը, քանի որ ընթացակարգին կարող է մասնակցել միայն արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչը, իսկ վերավաճառող ընկերություններից ձեռք բերված ապրանք մատակարարող ընկերությունները զրկվում են այդ իրավունքից, քանի որ պատվիրատուի պահանջած խմբաքանակի վերաբերյալ փաստաթղթերը հասանելի են միայն արտադրողի պաշտոնական ներկայացուցչին, ուստի խախտվում են <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի Հոդված 13-ի 2 կետի 2 ենթակետի պահանջները՝
<<2. Գնման առարկայի բնութագրերը՝ ... 2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.>>:

Պատվիրատուն այս պահանջը դրել է մեկ նպատակով: Պատվիրատուն ցանկանում է ստեղծել փակ շղթա, որտեղ անհնար կլինի մուտք գործել վերավաճառող ընկերությունների ապրանքով: Անշուշտ պատվիրատուն բերելու է մի շարք պատճառաբանություններ, ցույց է տալու իր <<մտահոգությունը>> մատակարարված ապրանքի վերաբերյալ և ձգտելու է ամեն կերպ ցույց տալ, որ հենց տվյալ խմբաքանակի համար տրված փաստաթղթերն են հանդիսանում որակի միակ երաշխիքը, հենց այդ փաստաթուղթը եղավ, ուրեմն որակի և անվտանգության հարցը փակված է: Իրականում, ինչպես արդեն նշեցինք, պատվիրատուն ձգտում է այնպես անել, որ առանց արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի իմացության և թույլտվության ապրանք չներմուծվի Հայաստան: Այստեղ հարց է ծագում, թե ինչը կարող է խանգարել վերավաճառող ընկերությանը ձեռք բերել պատվիրատուի պահանջած խմբաքանակի փաստաթղթերը արտադրողից: Պատասխանը հետևյալն է: Միջազգային ճանաչում ունեցող արտադրողները աշխատում են դիստրիբյուտորական ցանցով, այսինքն ամեն երկրում կամ տարածաշրջանում նշանակում են դիստրիբյուտորներ՝ պաշտոնական ներկայացուցիչներ: Օրինակ եթե ՀՀ-ում գտնվող որևէ առևտրային ընկերություն որոշի նամակ գրել գործարանին՝ ցանկանալով ձեռք բերել ապրանք, ապա գործարանը նամակը վերահասցեավորում է տվյալ երկրում նշանակված դիստրիբյուտորին: Եթե ՀՀ-ում գտնվող առևտրային ընկերությունը նամակ գրի այլ երկրի դիստրիբյուտորին, ապա վերջինս չի վաճառի ապրանք ՀՀ-ում գտնվող ընկերությանը, քանի որ արտադրողի քաղաքականությունն այնպիսին է, որ դիստրիբյուտորները պետք է մուտք չգործեն այլ երկրների դիստրիբյուտորների շուկա: Այլ կերպ ասած, շուկան բաժանված է տարածաշրջանների և ամեն դիստրիբյուտոր գործում է իրեն կցված երկրում կամ տարածաշրջանում: Երբ ՀՀ-ում գտնվող առևտրային ընկերությունը ցանկանա ձեռք բերել պատվիրատուի պահանջած խմբաքանակի փաստաթուղթը, ապա ստիպված է նամակ գրել արտադրողին, քանի որ այդ փաստաթուղթը կարող է տալ միայն արտադրողը, որն էլ բնականաբար չի տրամադրի այդ փաստաթուղթը, քանի որ տվյալ երկրում արդեն ունի դիստրիբյուտոր և գործող դիստրիբյուտորի տնտեսական շահերին վնասող քայլ չի կատարի: Ստացվում է մի իրավիճակ, երբ ՀՀ-ում գտնվող առևտրային ընկերությունը եթե նույնիսկ զգալիորեն մատչելի գնով ապրանք ձեռք բերի վերավաճառող ընկերությունից և փորձի մատակարարել պաշտպանության նախարարությանը, ապա վերջինս չի ընդունելու ապրանքը, քանի որ այնպիսի

փաստաթուղթ է պահանջում, որը գտնվում է միայն արտադրողի մոտ: Տվյալ իրավիճակից օգտվում է արտադրողի պաշտոնական բացառիկ դիստրիբյուտորը, քանի որ առանց որևէ մրցակցի, բնականաբար ուռճացված գնով ապրանք է վաճառում պատվիրատուին: Այսինքն պատվիրատուն նախընտրում է ուռճացված գնով ապրանք ձեռք բերել պաշտոնական բացառիկ դիստրիբյուտորից, քան զգալիորեն մատչելի գնով այլ ընկերությունից, որը **նույն արտադրողի նույն ապրանքը** ձեռք է բերել վերավաճառողից: Պատվիրատուի այսպիսի պահանջների դեպքում բացառվում է մրցակցությունը, քանի որ արդեն հենց սկզբից նախապատվությունը տրվում է գործարանի պաշտոնական բացառիկ դիստրիբյուտորին:

բ Ապրանքի պիտանիության ժամկետը պարզելու համար պատվիրատուն պահանջում է, որ այդ փաստաթուղթը տրված լինի հենց արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից, այսինքն վերավաճառող ընկերությունից ձեռք բերված ապրանքը համակցված բաց, հասանելի աղբյուրներից ձեռք բերված տվյալ մոդելի ապրանքի պիտանիության ժամկետի վերաբերյալ փաստաթղթով, անընդունելի են պատվիրատուի համար: Պատվիրատուի կողմից այսպիսի պահանջի սահմանումը հանգեցնում է նրան, որ վերավաճառող ընկերությունից ձեռք բերված ապրանքը, որն օրինակ ելնելով իր առանձնահատկություններից պարունակում է միայն պիտանիության ժամկետի ավարտի վերաբերյալ տեղեկություններ, չի կարող մատակարարվել ՊՆ-ին բաց աղբյուրներից ձեռք բերված փաստաթղթով, որը հավաստում է ապրանքի պիտանիության ժամկետը: Այսինքն օրինակ եթե մատակարարվել է կատետր, որի տուփի վրա առկա մակնշմամբ հնարավոր չէ պարզել պիտանիության ժամկետի ավարտը, ապա բաց աղբյուրներում հասանելի այդ նույն մոդելի, նույն արտադրողի ձեռնարկը հիմք չի ընդունվելու ՊՆ կողմից: Նման պահանջը խոչընդոտում է մրցակցությանը՝ արտոնություն տալով արտադրողի պաշտոնական ներկայացուցչին:

Որպես ամփոփում ստորև կկատարենք ևս մեկ դիտարկում:
10 հոկտեմբերի 2019 թվականի N 1422-Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 4-Ի N 526-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-Ի N 1454-Ն ՈՐՈՇՈՒՄ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ 21-րդ կետի 1-ին ենթակետի ա. պարբերությունում սահմանված է հետևյալը՝
«ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում.»:
Այստեղից պարզ է դառնում, որ ՀՀ կառավարությունը հստակ կերպով սահմանել է այն փաստաթղթերի կոնկրետ անվանումները, որոնք՝ անհրաժեշտության դեպքում, Վաճառողը պետք է ներկայացնի Պատվիրատուին՝ պայմանագրի կատարման փուլում:
ՀՀ ՊՆ-ի կողմից Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> Հավելված թիվ 1-ի Ծանոթության ՝ 2-րդ կետի 2.1 ենթակետով սահմանված են հետևյալ պահանջները՝
<< 2. Պայմանագրի կատարման փուլում մատակարարը ապրանքի մատակարարված խմբաքանակի հետ պետք է ներկայացնի.
2.1 Խմբաքանակն ուղեկցող որակը հավաստող փաստաթուղթ՝ փորձարկման արձանագրություն (կամ հավաստագիր) կամ որակի հավաստագիր (կամ անձնագիր) կամ խմբաքանակի հավաստագիր կամ տվյալ խմբաքանակի որակը հավաստող այլ փաստաթուղթ՝ տրված համապատասխան իրավասու մարմնի կողմից:>>:

Այդ պահանջները չեն համապատասխանում պայմանագրի կատարման փուլում՝ անհրաժեշտության դեպքում ներկայացվելիք փաստաթղթերի այն կոնկրետ անվանումներին, որոնք սահմանված են գործադրի կողմից, կազմված են ՀՀ Կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 21-րդ կետի 1-ին ենթակետի ա պարբերությունով սահմանված պահանջների խախտումներով, ուստի Հրավերի ընթացակարգը պետք է չկայացած հայտարարվի, քանի որ Հրավերի <<ՏԵԽՆԻԿԱԿԱ ԲՆՈՒԹԱԳԻՐ>> հավելված թիվ 1-ի Ճանոթության պահանջները վերաբերվում են Հրավերի բոլոր չափաբաժիններին:

3. Բողոքի պահանջը

1. Պարտավորեցնել <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/20>> ծածկագրով գնանշման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել <<ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/20>> ծածկագրով գնանշման ընթացակարգը:

Կից ներկայացվում է

1. Բողոքի ներկայացման համար նախատեսված վճարման անդորրագրի պատճենը և անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

2. Պետռեգիստրի վկայականը:

Մեդէքսպերտ ՍՊԸ տնօրեն Ն.Մի. Յակոբյան

27.03.2022թ.